

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/2

16 հոկտեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Մխիթար Սերոբյանի 05.10.2012թ. դիմումով բերված բողոքը «ԿԱ ՊԵԿ ՕՀԿ 07.08.2012թ. թիվ 1003796 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 20.07.2012թ. թիվ 1003796 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Մխիթար Սերոբյանի մոտ կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 07.08.2012թ-ին կազմվել է 1003796 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 480.000 դրամ:

Ստուգման ակտի 9-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ համաձայն «ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության հետաքննիչ Ա.Խաչատրյանի կողմից տրամադրված նյութերի, Ա/Ձ Մխիթար Սերոբյանը 2012թ. ապրիլ, մայիս, հունիս ամիսներին ք.Երևան, Չարենցի 4 հասցեում շահագործել է բիլիարդի 2 խաղասեղան, որոնց համար չի ստացել արտոնագիր: Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» «Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի հաշվարկվում է տուգանք վճարման ենթակա արտոնագրային վճարի կրկնակի չափով 480.000 դրամ (40.000 x 2 սեղան x 3 ամիս) x 2: Նշված գումարը ենթակա է վճարման բյուջե:

Ա/Ձ Մխիթար Սերոբյանի դիմումում մասնավորապես նշված է.

Ստուգման ակտով «Արտոնագրային վճարների մասին» «Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն /ուժի մեջ է մտել 01.07.2012թ-ին/ նշանակվել է 480.000 դրամ տուգանք ս.թ. ապրիլ, մայիս և հունիս ամիսներին արտոնագիր չստանալու համար:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» «Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացնում եմ առարկություններս:

«Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն. «Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը ունի հետադարձ ուժ: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Ենթադրում եմ, որ համեմատաբար մեղմ պատասխանատվության ենթարկելու համար չի կատարվել տուգանքի չափի հաշվարկ խախտման կատարման ժամանակ գործող «Արտոնագրային վճարների մասին» «Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով, այն է՝ «Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց արտոնագրի գործունեության իրականացման տվյալ վայրում սույն օրենքի թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակով /տեսակներով/ զբաղվելու դեպքում իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք ապօրինի գործունեության համար «Հարկերի մասին» «Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվող տուգանքի չափով:

Խնդրում եմ սույն դիմումը քննելիս հաշվի առնել այն հանգամանքը, որ հարկերի վճարումից խուսափելու նպատակով ես ընդհատակյա գործունեություն չեմ իրականացրել: Դրա անվիճելի ապացույցն է այն, որ ապրիլ-հունիս ամիսներին հաճախորդներին տրամադրվել են ՀԴՄ կտրոններ: Պարզապես, օրեցօր նվազող շրջանառության պայմաններում, երբ արդեն իսկ գործունեությունը դադարեցնելու հարց էր առաջացել, հնարավորություն չկար արտոնագրի համար վճարել միանգամից առնվազն եռամսյակի գումար, այն էլ երեսուն տոկոս ավելի չափով, քան նախկինում հաստատագրված հարկն էր: Լսելով «Կառավարության նիստում վարչապետի խոստումը, որ «Արտոնագրային վճարների մասին» «Օրենքում կկատարվի փոփոխություն, ինչի արդյունքում հարկատուները հնարավորություն կունենան ձեռք բերել արտոնագիր վճարելով նաև մեկ ամսվա համար, ուստի արտոնագրի համար վճարի կատարման ձգձգումը պայմանավորված էր միայն այդ փոփոխությամբ սպասելու հանգամանքով:

Ելնելով վերը նշվածից Ա/Ձ Մխիթար Սերոբյանը խնդրում է վերանայել ստուգման ակտով նշանակված տուգանքի չափը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Մխիթար Սերոբյանի և ստուգման իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

« Սահմանադրության 42 հոդվածի համաձայն. «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն:

Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

«Իրավական ակտերի մասին» « օրենքի 78 հոդվածի 3 մասի համաձայն. «Իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե սույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձին պատասխանատվության ենթարկելու համար հիմք է օրենքով սահմանված ժամկետում արտոնագիր չստանալը, իսկ որոշակի ժամանակահատվածի համար (եռամսյակ, կիսամյակ, 9 ամիս, տարի) տրվում է մեկ արտոնագիր, ուստի խախտման դեպքերը կարող են դիտարկվել ըստ արտոնագրային գործունեության ժամանակահատվածների: Հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում պետք է պատասխանատվության նորմը կիրառել հետևյալ կերպ.

01.04.2012թ-ից մինչև 01.07.2012թ-ն ընկած ժամանակահատվածում կատարված խախտման համար կիրառել այդ ժամանակահատվածում գործող (01.04.2012թ-ից մինչև 01.07.2012թ.) իրավանորմով սահմանված պատասխանատվության նորմը, իսկ 01.07.2012թ-ից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ՝ 01.07.2012թ-ից գործող իրավանորմը:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ Ա/Ձ Մխիթար Սերոբյանի կողմից խախտումը կատարվել է 01.04.2012թ-ից մինչև 01.07.2012թ-ն ընկած ժամանակահատվածում, հետևապես անհրաժեշտ է կիրառել այդ ժամանակահատվածում գործող (01.04.2012թ-ից մինչև 01.07.2012թ.) իրավանորմով սահմանված պատասխանատվության նորմը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Արտոնագրային վճարների մասին» « օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի (01.04.2012թ-ից մինչև 01.07.2012թ. գործող խմբագրությամբ) ու «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Մխիթար Սերոբյանի ապրիլ, մայիս և հունիս ամիսների ֆիսկալային շրջանառությունը կազմել է ընդամենը 367.981 դրամ, ստուգման ակտի 9-րդ կետով առաջադրված տուգանքը ենթակա է նվազեցման 296.009,5 դրամի չափով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

« ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 07.08.2012թ. թիվ 1003796 ստուգման ակտի 9-րդ կետով առաջադրված տուգանքը նվազեցնել 296.009,5 դրամի չափով:

Հանձնաժողովի նախագահի
ժամանակավոր պաշտոնակատար՝



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ